ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ИНФОРМАЦИЯ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 10 ՏԱՐԻՆ

Հնագիտական, ազգագրական, բանահյուսական աշխատանքները Հայաստանում ավելի լավ ծավալելու նպատակով 1959 թ. հուլիսին Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի որոշմամբ կազմակերպվում է գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտը, որի հիմքը հանդիսացան պատմության ինստիտուտի հնագիտության սեկտորը և ազգագրության խումբը։ Ինստիտուտի կազմի մեջ մտան արվեստի ինստիտուտի պարարվեստի խումբը, գրականության ինստիտուտի հայ ժողովրդական բանահյուսության սեկտորը. Հայաստանի պատմության թանգարանի մի քանի գիտաշխատողներ։ Ստեղծվեց գիտական մի կոլեկտիվ, որը մեծ եռանդով ձեռնամուխ եղավ Հայաստանի հնագիտության, հայ ազգագրության, վիմագրության, բանահյուսության, երաժշտության և պարարվեստի ուսումնասիրությանը։ Գնալով ինստիտուտը ընդարձակվում է. եթե 1959 թ. ինստիտուտն ուներ ընդամենը 22 աշխատակից, այժմ նրա աշխատողների թիվը հասնում է 81-ի, որից 56-ը գիտաշխատողներ են, նրանցից մեկը Հայկ. ՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ է, 7-ը ունեն գիտությունների դոկտորի, իսկ 30-ը՝ թեկնածուի գիտական աստիճան։

Ինստիտուտն ունի Հայաստանի վաղ հնագիտության, հին և միջնադարյան հնագիտության, վիմագրության, ազգագրության, բանահյուսության բաժիններ և Հին Արևելքի խումբ։ Առաջին երկու բաժինները զբաղվում են Հայաստանի հնագիտական ուսումնասիրությամբ։

Նրանց ուսումնասիրություններն ընդգրկում են տարբեր դարաշրջաններ սկսած հին քարի դարից մինչև ուշ միջնադարը։ Մինչև ինստիտուտի ստեղծումը երկար տարիներ հնագիտական աշխատանքներ էին կատարվում Դվինում՝ միջնադարյան Հայաստանի առավել խոշոր այս քաղաքում, Կարմիր-բլուրում, որտեղ գտնվել է ուրարտական Թեյշեբաինի ամրոց-քաղաքը, Արին-բերդում՝ ուրարտական էրեբունի, վաղ հայկական Երևան ամրոց-քաղաքում, հին հայկական նշանավոր ամրոց Գառնիում, Լճաշենում և հետախուզական բնույթի աշխատանքներ մի քանի այլ վայրում։ Այդուհանդերձ Հայաստանի հնագիտական ուսումնասիրությունը հավասարաչափ չէր տարվում և կային նվազ ուսումնասիրված կամ բոլորովին չուսումնասիրված պատմա-աշխարհագրական շրջաններ, նույնիսկ ամբողջ դարաշրջաններ։ Նորաստեղծ ինստիտուտը ոչ միայն շարունակեց արդեն ձեռնարկված հնագիտական պեղումները, այլև նշված բացը վերացնելու նպատակով կազմակերպեց հնագիտական նոր արշավախմբեր և ձեռնարկեց նոր պեղումներ։ Բավական է նշել Հին-Արմավիրի, Նոր Արմավիրի, Մեծամորի և ժայռապատկերներ ուսումնասիրող արշավախմբերի աշխատանքները, որոնք տալիս են ցանկալի արդյունքներ։

Հին քարի դարի (պալեոլիթ) ուսումնասիրությունը Հայաստանում վերջին երեք տասնամյակների ընթացքում պսակվել է մեծ հաջողություններով։ Երևանի լճի ափին պեղված քարայրը հին քարեդարյան՝ 40—80 հազար տարվա հնության հսկայական նյութեր տվեց։ Վերջին տարիների ընթացքում մեծ աշխատանք է կատարվել ժայռապատկերների հայտնաբերման և ուսումնասիրության ուղղությամբ։ Հազարավոր ժայռապատկերներ են հայտնաբերվել Գեղամա, Վարդենիսի, Սյունյաց լեռներում, Արարատի լանջերում և այլուր։ Դրանք արտահայտում են Հայաստանի նախնադարյան բնիկների կյանքն ու կենցաղը, զբաղմունքները, աշխարհաճանաչողության մակարդակը, հնամենի հավատալիքներն ու պատկերացումները, միաժամանակ լինելով նախնադարյան արվեստի շատ աչքի ընկնող հուշարձաններ։ Հրատարակության է հանձնված ժայռապատկերներին նվիրված երկու մեծածավալ հատոր։

Ինստիտուտում ղգալի աշխատանք է տարվում նաև մ. թ. ա. V—IV հազարամյակների տակավին գրեթե անհայտ մշակույթի հայտնաբերման և ուսումնասիրության ուղղությամբ։

Մեծամորի պեղումները բացահայտեցին այնտեղ գոյություն ունեցող խոշոր մետաղագործական կենտրոնի առկայությունը, որը կարևոր դեր է խաղացել հնագույն ժամանակներում։ Մեծամորը տնտեսական, մշակութային նշանավոր կենտրոն է եղել սկսած III հազարամյակից մինչև VIII դարը մ. թ. ա.։ Լճաշենում և Շենգավիթում կատարված պեղումները հնարավորություն են ընձեռում պարզելու Հայաստանի նախահայկական շրջանի պատմության

հարցերը։ Մեծ աշխատանքներ են կատարվում ուրարտական բերդաքաղաքների ուսումնասիրության գծով՝ Կարմիր-բլուրում, Արին-բերդում, Հին Արմավիրում, Նոր Արմավիրում, որոնք կարևոր նշանակություն ունեն հին արևելյան ռազմա-ստրատեգիական հասարակության տնտեսական կյանքի, սոցիալական կառուցվածքի և մշակույթի ուսումնասիրության համար։ Հայ ժողովրդի պատմության հին շրջանի ուսումնասիրության տեսակետից խոշոր նշանակություն ունեն Գառնիի, Հին Արմավիրի և Հայաստանի միջնադարյան խոշորագույն քաղաք Դվինի պեղումները, որոնք խիստ արժեքավոր նյութեր են տալիս ոչ միայն Հայաստանի, այլև հարևան երկրների քաղաքային կյանքի, տնտեսության. մշակույթի, ինչպես և հարևան երկրների հետ ունեցած կապերի ուսումնասիրության համար։

Արշավախմբերի աշխատանքների արդյունքներն ինստիտուտը հրատարակում է «Հնագիտական պեղումները Հայաստանում» մատենաշարում, որի արդեն լույս տեսած 11 պրակներից չորսը նվիրված են Կարմիր-բլուրին (պեղումների ղեկավար՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Բ. Պիոտրովսկի), մեկը՝ Արին-բերդին (ղեկավար՝ ճարտարապետության դոկտոր Կ. Լ. Հովհաննիսյան), չորսը՝ Գառնիին (ղեկավար՝ ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Բ. Ն. Առաքելյան), մեկը՝ Գոլովինոյի վաղ երկաթի ժամանակների դամբարանների պեղումներին (ղեկավար՝ պրոֆ. Հ. Ա. Մարտիրոսյան), երկուսը՝ Ջրվեժի և Ողջաբերդի պեղումներին (ղեկավար՝ ճարտարապետության դոկտոր Ն. Մ. Տոկարսկի)։

1964 թ. սկսած ինստիտուտի հնագետների մի զգալի մասը զբաղված է «Հայաստանի հնագիտական հուշարձանները» ընդարձակ մատենաշարի ստեղծման և հրատարակման աշխատանքներով։ Մատենաշարում հանրագումարի են բերվելու Հայաստանում կատարված հնագիտական ուսումնասիրությունների արդյունքները և մի քանի տասնյակ պրակներով ընթերցողներին են ներկայացվելու Հայաստանի տարբեր դարաշրջանների՝ հին քարի դարից սկսած մինչև ուշ միջնադարյան հուշարձանները, տրվելու են նրանց նկարագրությունը, գիտական բնութագրությունը, նրանց պատմամշակութային արժեքը։ Ինստիտուտի այս մեծ նախաձեռնությունն արդեն իրականացվում է, լույս են տեսել այդ մատենաշարի առաջին երեք պրակները։ Տպագրվում են IV և V պրակները։

Հայաստանում կատարվող հնագիտական ուսումնասիրությունների հիմնական արդյունքները ամփոփված են նաև հայ ժողովրդի պատմության հրատարակության պատրաստվող բազմահատորյակում, որի առաջին հատորի շարադրմանը մասնակցել են պատմական գիտությունների դոկտորներ Հ. Մարտիրոսյանը, Ն. Հարությունյանը, պատմական գիտությունների թեկնածուներ Ս. Սարգարյանը, Գ. Տիրացյանը, ինստիտուտի դիրեկտոր, Հայկ. ՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Բ. Առաքելյանը։

Բացի այս մատենաշարերից, ինստիտուտը հրատարակել է բազմաթիվ հնագիտական մենագրություններ և ուսումնասիրություններ, ինչպես, օրինակ, Բ. Ն. Առաքելյանի «Քաղաքները և արհեստները Հայաստանում» աշխատության երկրորդ հատորը, Հ. Ա. Մարտիրոսյանի «Հայաստանը բրոնզի և վաղ երկաթի դարում» մենագրությունը, Ս. Գ. Բարխուդարյանի «Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ-վարպետներ» հետազոտությունը, Ն. Վ. Հարությունյանի «Երկրագործությունը և անասնապահությունը Ուրարտուում», «Ուրարտական նորագույն արձանագրությունները» աշխատությունները, Ս. Ա. Եսայանի «Ջենքերը հին Հայաստանում», Է. Վ. Խանզադյանի «Հայկական լեռնաշխարհի III հազարամյակի մշակույթը» և այլ ուսումնասիրություններ։

1968 թ. ինստիտուտում կազմակերպվեց Հին Արևելքի խումբ, որը զբաղվում է Հին Արևելքի լեզուների, բանասիրության, պատմության ուսումնասիրությամբ։ Խումբը զգալի աշխատանքներ է կատարում. արդեն տպագրության է հանձնված խմբի ղեկավար, պատմ. գիտ. դոկտոր Ն. Հարությունյանի «Ուրարտու-Բիայնիլի» մեծածավալ մենագրությունը, պատմ. գիտ. թեկնածու Վ. Խաչատրյանի «Խեթական կայսրության արևելյան գավառների տեղագրության հարցեր» աշխատությունը։

Ինստիտուտում կարևոր տեղ է գրավում հայերեն վիմական արձանագրությունների ուսումնասիրությունը։ Ձեռնարկված է «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի հրատարակությունը, ուր պետք է ամփոփվեն հայերեն բոլոր վիմական արձանագրությունները, որոնց թիվը, ըստ նախնական տվյալների, 10 հազարից ավելի է։ Արդեն հավաքված է շուրջ 7000 արձանագրություն և լույս են տեսել այդ մատենաշարի առաջին երեք պրակները, տպագրվում են չորրորդը և հինգերորդը։ Մեր և Ադրբեջանական ՍՍՀ պատմության ինստիտուտի արշավախումբը, պատմական գիտ. թեկնածու Ս. Բարխուդարյանի ղեկավարությամբ, մի քանի տարի է, ինչ հայերեն և արևելյան լեզուներով արձանագրություններ է հավաքում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում և Ադրբեջանի հայաբնակ շրջաններում, հավաքված են ավելի քան 1000 հայերեն արձանագրություններ, որոնք վերաբերում են IX—XVII դդ., ունեն բազմազան բովանդակություն և առաջնակարգ աղբյուր-

ներ են հանդիսանում մեր պատմության, աշխարհագրության, լեզվի, սոցիալ-տնտեսական դրության, մշակույթի ուսումնասիրման համար։ 1970 թ. արշավախումբը արձանագրություններ կհավաքի Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունում։ Արդեն ավարտվում է Ղրիմի և Հյուսիսային Կովկասի հայերեն արձանագրությունների հավաքումը, պատճենավորված են ավելի քան 600 արձանագրություններ։ Վիմագրության բաժնի գծով պատրաստվում են մի քանի հետաքրքիր աշխատություններ՝ Ա. Շահինյանի «Հայաստանի կոթողային հուշարձանները (խաչքարեր)», Ս. Ավագյանի «Վիմական արձանագրությունների լեզվի առանձնահատկությունները», Ա. Մանուչարյանի «Միջնադարյան Հայաստանի շինարարական արձանագրությունների ժամանակագրությունը»։

Զգալի աշխատանքներ են կատարվում հայ ազգագրության գծով, հիմնական թեման Հայաստանի պատմա-ազգագրական ատլասի կազմումն է, որը սկսված է տարիներ առաջ, պատրաստվում են «Անասնապահությունը Հայաստանում», «Հայկական բնակարանը», «Երկրագործությունը Հայաստանում» բաժինները։ Վերոհիշյալ աշխատանքները կմտնեն ակադեմիայի ազգագրության ինստիտուտի, Վրաստանի և Ադրբեջանի համապատասխան հիմնարկների համատեղ պատրաստած «Անդրկովկասի պատմա-ազգագրական ատլասում»։ Լուրջ աշխատանքներ են տարվում հայ ժողովրդի կենցաղում խորհրդային շրջանում կատարված փոփոխությունների ուսումնասիրության ուղղությամբ. արդեն ավարտված է Կ. Սեղրոսյանի «Արհեստավորական ավանդույթները և նրանց վերափոխված արտահայտությունները լենինականցիների արդի կենցաղում» հետազոտությունը, նախապատրաստվում է հրատարակության «Հայկական ԽՍՀ բնակչության կենցաղի փոփոխությունները խորհրդային շրջանում» կոլեկտիվ մենագրությունը։ Մշակվում են նաև մի շարք թեմաներ տոհմային հարաբերությունների, անասնապահության, հոգևոր մշակույթի, հայ ազգագրության պատմության վերաբերյալ։ Ինստիտուտի գոյության տարիներին լուրջ աշխատանքներ են տարվել ազգագրական նյութեր հավաքելու ուղղությամբ (գիտարշավների ղեկավար պատմ. գիտ. թեկնածու Դ. Վարդումյան)։ Դիտարշավախմբեր են առաքված Հայկական ՍՍՀ Իջևանի, Նոյեմբերյանի, Կրասնոսելսկի, Շամշադինի, Սիսիանի, Գորիսի, Ղափանի, Մեղրու, Աշտարակի, Ապարանի, Դուդարքի շրջանները, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի, ինչպես նաև Ռոստովի մարզի Մյասնիկյանի, Կրասնոդարի երկրամասի, Աբխազական ԻՍՍՀ հայկական շրջանները։

Ազգագրության գծով հրատարակվել են հետևյալ աշխատությունները. Կ. Մելիք-Փաշայանի «Անահիտ դիցուհու պաշտամունքը», Դ. Վարդումյանի և Էմ. Կարապետյանի «Հայաստանի կոլտնտեսականի ընտանիքը և ընտանեկան կենցաղը», Ա. Պատրիկի «Հայկական տարազը» և այլն։

Հայ բանահյուսության ուսումնասիրության, պարային և երաժշտական ստեղծագործությունների հետազոտման և հրատարակման, ինչպես նաև նոր նյութերի գրանցման, հավաքման և ձայնագրման ուղղությամբ ևս զգալի աշխատանքներ են տարվել։ Լույս են ընծայվել «Հայ ժողովրդական հեքիաթների» 1—5, 9—10 հատորները, տպագրվում է 6-րդ հատորը, ռուսերեն լեզվով հրատարակված է պատմական գիտությունների դոկտոր Սրբուհի Լիսիցյանի «Հայ հինավուրց պարերն ու թատերական ներկայացումները» մեծածավալ աշխատության I հատորը, տպարանում է II-ը, պատրաստվում են հաջորդ հատորները։ Հրատարակվել են Ս. Հարությունյանի կազմած «Հայ ժողովրդական հանելուկները», Գ. Գրիգորյանի «Սովետահայ վիպերգերն ու պատմական երգային բանահյուսությունը»։ Մոսկվայում լույս կտեսնի էպոսի ռուսերեն գիտական հրատարակությունը, որի թարգմանությունը կատարել է Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Կ. Մելիք-Օհանջանյանը։ Բանահյուսության բաժնում պատրաստվում են մի շարք հետաքրքիր աշխատություններ, նշենք դրանցից մի քանիսը. Ա. Նազինյանի «Հեքիաթների սյուժետային համարարքառը», Գ. Գրիգորյանի «Հայ ժողովրդական վիպական երգերը», Ս. Հարությունյանի «Հայ ժողովրդական երգմնա-բանադրական բանահյուսությունը», Ս. Սարգսյանի «Երգիծանքը հեքիաթներում և առակներում» և այլն։

Հայաստանի գրեթե բոլոր շրջաններից և խորհրդային Միության հայաբնակ վայրերից գրի են առնված բազմաթիվ հեքիաթներ, առակներ, առածներ, զրույցներ, հանելուկներ, պարերգեր, մահերգեր, օրորոցային, սիրո, հարսանեկան երգեր, աղոթքներ, օրհնանքներ։

Ինստիտուտը հրատարակում է նաև արտասահմանյան հայերի աշխատությունները. տպագրվել է հանգուցյալ խեթագետ Ն. Մարտիրոսյանի կողմից հայերեն թարգմանված «Գիլգամեշ» էպոսը, շուտով լույս կտեսնի Ս. Տեր-Մկրտչյանի «Փունջեր Վասպուրականի ազգագրությունից», արվեստի ինստիտուտի հետ համատեղ հրատարակության է պատրաստվում ամերիկահայ բանահավաք-երաժշտագետ Մ. Թումաճանի բազմահատոր «Հայերենի երգ ու բան» հավաքածուն, որի առաջին հատորը արդեն

հանձնված է տպագրության։ Ինստիտուտը հրատարակության է պատրաստում ականավոր ազգագրագետ-բանահավաք Գ. Սրվանձտյանի աշխատությունները երեք հատորով։ Սկսված է «Նյութեր և ուսումնասիրություններ հայ ազգագրության և բանահյուսության» մատենաշարի հրատարակությունը, որի առաջին չորս հատորները հանձնված են տպագրության։

Ինստիտուտը կազմակերպել է գիտական նստաշրջաններ՝ նվիրված ականավոր ազգագրագետների, բանագետների գործունեությանը։ Ինստիտուտի գիտաշխատողները հետաքրքիր զեկուցումներով հանդես են եկել Մոսկվայում, Լենինգրադում, Կիևում, Քիշինևում, Բաքվում և այլ քաղաքներում կազմակերպված հնագետների, ազգագրագետների, բանագետների ամենամյա նստաշրջաններին, կոնֆերանսներին ու սիմպոզիումներին։

Ինստիտուտի աշխատակիցները մասնակցում են նաև միջազգային կոնգրեսներին։ 1960 թ. Մոսկվայում կայացած արևելագետների միջազգային 25-րդ կոնգրեսում ինստիտուտի հին և միջնադարյան հնագիտության բաժնի վարիչ, պրոֆ. Կ. Ղաֆադարյանը հանդես եկավ «Դվինի պեղումները», իսկ ավագ գիտաշխատակից, պատմ. գիտ. թեկնածու Գ. Տիրացյանը «Աքեմենյան տրադիցիաները հին Հայաստանում» զեկուցումներով, 1960 թ. օգոստոսին Ստոկհոլմում կայացած պատմաբանների միջազգային VII կոնգրեսում պրոֆ. Բ. Առաքելյանը զեկուցեց Հայաստանի նյութական մշակույթի մասին անտիկ շրջանում, որը մեծ ուշադրության արժանացավ։ 1964 թ. օգոստոսին Մոսկվայում կայացած ազգագրական և մարդաբանական գիտությունների VII կոնգրեսին մասնակցեցին մեր ինստիտուտի գիտաշխատողներ. գիտության վաստակավոր գործիչ Ս. Լիսիցյանը հանդես եկավ «Հայ ժողովրդական պարային և թատերական ներկայացումները», պատմական գիտությունների դոկտոր Էմ. Կարապետյանը՝ «Պատրոնոմիական հարաբերությունների վերապրուկները հայերի մեջ», պատմ. գիտ. թեկնածու Դ. Վարդումյանը՝ «Հայաստանի ազգագրական շրջանների բնութագրումը» ուշագրավ զեկուցումներով, որոնք հրատարակվեցին անգլերեն և ռուսերեն լեզուներով։ Հնագիտության և ազգագրության ինստիտուտը գիտական կապեր է հաստատել ժողովրդական դեմոկրատիայի և արտասահմանյան երկրների գիտնականների հետ։ Հայաստան են այցելել Պրագայի համալսարանի դոցենտ, խեթագետ Վ. Սոուչեկը, ամերիկացի հնագետ Ա. Ռոբերտը, 1960 թ.՝ պրոֆեսորներ Գյոտցեն (ԱՄՆ), Հյուլին (Անգլիա), Բընբցիանուն (Ռումինիա), Վարշավայի գիտության և արվեստի պատմության ինստիտուտի գիտաշխատող, դոկտոր Մարիա Ռեկան, բուլղարական ազգագրագետ Ա. Պրիմովսկին, որն զբաղվում է նյութական մշակույթի ուսումնասիրությամբ, ինչպես նաև հայ-բուլղարական մշակույթի փոխազդեցությունների հարցով, ամերիկյան հայտնի մարդաբան և հնագետ, Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Հենրի Ֆիլդը, որի նախաձեռնությամբ ԱՄՆ-ում անգլերեն թարգմանվում են Բ. Առաքելյանի «Գառնի» աշխատության I և II պրակները, հնդիկ հնագետներ Լալը և Շարմանը, անգլիացի գիտնականներ Դավիթ Լանգն ու հնագետ Չարլզ Բարնեյը։ Վերջինս հանգես է եկել Թուրքիայի տերիտորիայում եղած ուրարտական հուշարձանների ուսումնասիրության վերաբերյալ զեկուցումով, իսկ ամերիկյան հնագետ Ռեգարտ Կերտոնը ծանոթացրեց Իրանական Ադրբեջանի տերիտորիայում կատարած իր հնագիտական աշխատանքներին։

Կ. ՄԵԼԻՔ-ՓԱՇԱՅԱՆ

ՋՈՒՋԵՎԱՆԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԻ ՎԱՂ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Ջուջևանի դամբարանադաշտը պատկանում է «Արամի բլուր» կոչվող ժայռափակ բլրի գագաթին գտնվող կիկլոպյան ամրոց-բնակատեղիին, ուր 1929 թ. բնակարանաշինարարության ժամանակ հայտնաբերվել են շենգավիթյան տիպի վաղ բրոնզեդարյան կացարաններ։ Կիկլոպյան այդ ամրոցը, որը անմատչելի է հարավային կողմից, շրջափակված է բնական և արհեստական ժայռապարիսպներով։ Նրա հյուսիսային մասով՝ 400 մ հեռավորության վրա ձգվող հարթավայրում, տարածվում է վաղ միջնադարյան բնակավայրն ու դերեզմանոցն իր հնագույն ավերված վանքով։ Ամրոցի ժայռապատ հարավային գագաթը ավարտվում է կապույտ գրանիտե քարաժայռերով կարուկ իջնող զառիթափ թեքությամբ, որի ստորոտով անցնում է ասֆալտապատ ճանապարհը, որը հատող դամբարանադաշտն իր լայնությամբ ձգվում է մոտ